

Էջմիածին երթամ ուխտ

Ech'miatsin yert'am ukht

Դանդաղ


Largo



Էջ - մի - ա - ծին — եր - թամ ուխտ, պագ-նեմ սե - դան —
Ech' - mi - a - tsin — yer - t'am ukht, pak' - nem se - ghan —



ջուխ - տե — ջուխտ, կան - չեմ զո - րա - վոր սրբ - բեր, — իմ հի -
jukh - te — jukht, kan - ch'em zo - ra - vor_ sər - p'er, — im hi -



վան - դին — ա - նեմ — թուղթ: Ա - նա - րատ - կաթ Աստ - վա -
van - din — a - nem — t'ukht. A - na - rat - kat' Ast - va -



-ծա - ծին, — դու ողջ պա - հե' նա - նի — բա - լին: —
-tsa - tsin, — du vokhch' pa - he_ na - ni — ba - lin. —

1. Էջմիածին երթամ ուխտ,
Պագնեմ սեղան ջուխտե ջուխտ.
Կանչեմ զորավոր սրբբեր,
Իմ հիվանդին անեմ թուղթ:
*Անարատ-կաթ Աստվածածին,
Դու ողջ պահե՛ նանի բալին:*

1. Ech'miatsin yert'am ukht,
Pak'nem seghan jukhte jukht:
Kanch'em zoravor sərpb'er,
Im hivandin anem t'ukht.
*Anarat-kat' Astvatsatsin
Du vokhch pahe nani balin.*

2. Լուսավորչի ծառները
Մատաղ անեմ գառները,—
Լուսավոր զորքիդ մեռնեմ,
Ջոկել ես արդարները:
Անարատ-կաթ...

2. Lusavorch'i tsarnerə
Matagh anem garrnerə,—
Lusavor zork'it mernem,
Jokel es art'arnerə.
Anarat-kat'...

3. Էջմիածին, քո վանքը
Լիքն ա Աստըծու բանքը.—
Աղաչեմ Լուսավորչին՝
Պահե իմ տղի կյանքը:
Անարատ-կաթ...

3. Ech'miatsin, k'o vank'ə
Lik'n a Astətsu bank'ə.—
Aghach'em Lusavorch'in
Pahe im təghi kyank'ə.
Anarat-kat'...